ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱ-ԻՄԱՍՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Լ. Հ. ՂԱԶԱՆՉՅԱՆ

Ներկայումս գիտության տարբեր բնագավառների զարգացման շնորհիվ տերմինակազմության խնդիրների ուսումնասիրությունը գնալով ավելի է գրավում տերմինաբանների ուշադրությունը։ Մասնագետները գտնում են, որ տերմինների տարբեր տիպի կաղապարների առանձնացումը, որոշակի հասկացություններ բնորոշող տերմինների միատիպ կառույցների վերհանումը և ընդհանրապես տերմինակազմության գործընթացի օրինաչափությունների ամբողջական ուսումնասիրությունը ոչ միայն տեսական, այլ նաև խիստ գործնական նշանակություն ունի[1]։

Քանի որ տերմինները, վերջին հաշվով, բառեր են, ուրեմն դրանց կազմությունն էլ ընդհանուր առմամբ նույնն է, ինչ որ բառերինը։ Բայց լեզվական այդ երկու պրոցեսների միջև որոշ տարբերություն կա, որը պայմանավորված է բառերի և տերմինների տարբերությամբ։ Լեզվի ընդհանուր գործածական բառերի առաջացումը ավելի շատ (կամ ինչ-որ չափով) տարերային բնույթ ունի (իհարկե տվյալ դեպքում բոլորովին չի անտեսվում առանձին գրողների, հեղինակների բառակերտման նորարարությունը), այն դեպքում, երբ տերմինների կազմությունը մեծ մասամբ գիտակցված, կազմակերպված բնույթով է ընթանում։ Իհարկե, այս գործում մեծ դեր են կատարում գիտության տարբեր ճյուղերի մասնագետները։ Այս կապակցությամբ Գ. Վինոկուրը նկատում է, որ տերմինները ոչ թե «ի հայտ են գալիս», այլ «հնարվում», ստեղծվում են, երբ զգացվում է դրանց անհրաժեշտությունը[2]։ *Բայց, այնուամենայնիվ, տերմինների կազմությունը կատարվում է տվյալ լեզվում եղած բառերի հիման վրա և անպայման այդ իսկ լեզվի բառակազմական օրենքների հաշվառմամբ։ Հետևաբար, տերմինակազմության վերլուծության ժամանակ, բնականաբար, պետք է առաջնորդվել լեզվաբանության կողմից մշակված բառակազմական վերլուծության ընդհանուր սկզբունքներով*[3]։

---

[1] *Տերմինակազմության օրինաչափությունների ուսումնասիրման մասին տե՛ս* В. Н. Семичев, Вопросы терминологического словообразования (автореферат канд. диссерт.), М., 1968.

[2] *Տե՛ս* Г. О. Винокур. О некоторых явлениях словообразования в русской технической терминологии, «Труды Моск. ин-та истории, философии и литературы», т. V, М., 1939, *էջ 24։*

[3] *Նման հարցերի վերլուծության ժամանակ հիմք ենք ընդունել ինչպես հայ, այնպես էլ սովետական մյուս լեզվաբանների բառակազմության (բառագիտության) վերաբերյալ եղած նշանակալից ուսումնասիրությունները։ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965։ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955։* Н. М. Шанский, Очерки по русскому словообразованию, М., 1968. К. А. Левковская, Теория слова, принципы ее построения и аспекты изучения лексического материала, М., 1962 *և մի շարք ուրիշ աշխատություններ։*

Սովետական լեզվաբանները ժամանակակից բառակազմական վերլուծության հիմնական թերությունները համարում են այն, որ չեն տարբերակվում լեզվի մակարդակները, համաժամանակությունը և տարժամանակությունը, բառակազմական կաղապարների բնույթն ու դրանց տեսակները և նման կարգի այլ խնդիրներ։

Լեզվաբանները գտնում են, որ բառակազմական վերլուծությունը կարելի է տանել թե՛ տարժամանակյա, և թե՛ համաժամանակյա տեսանկյունով[4]։ Բայց ուսումնասիրողների մեծ մասը տերմինակազմության վերլուծության ժամանակ առաջնությունը տալիս է երկրորդ մոտեցմանը։

Բառակազմության (մանավանդ տերմինակազմության) համաժամանակյա ուսումնասիրությանը նախապատվություն տալը բացատրվում է այն հանգամանքով, որ այս կարգի վերլուծությունների դեպքում չի կարելի ավելի վաղ շրջանում գոյություն ունեցող կապերն ու հարաբերությունները տեղափոխել ժամանակակից լեզվի բառակազմական համակարգը. այլ կերպ ասած, տերմինակազմության վերլուծությունը հստակորեն պետք է տարբերակվի ստուգաբանական մեկնություններից (հատկապես այն դեպքում, երբ նրա տվյալները օգտագործվում են բառի ժամանակակից կառուցվածքի բացատրության համար)[5]։

Վերլուծությունը կարելի է տանել տարժամանակյա տեսանկյունով այն դեպքում, եթե մեզ հետաքրքրողը բառակազմության (կամ տերմինակազմության) զարգացման հիմնական օրինաչափություններն ու միտումներն են։

Այս կարգի հետազոտություններում կարևոր է վերլուծության բառային և բառակազմական մակարդակների տարբերակման հարցը։ Եթե մեզ հետաքրքրողը տերմինների գոյացման կամ կուտակման և դրանց աղբյուրների ու ուղիների որոշման հարցն է (այստեղ է մտնում նաև լեզվի ընդհանուր գործածական բառերի տերմինացման առանձնահատկությունների ուսումնասիրությունը), ապա թվում է, որ մենք գործ ունենք տերմինների վերլուծության բառային մակարդակի հետ։ Մնացած դեպքերում, երբ խոսքը լեզվի բառակազմական որոշակի միջոցների (եղանակների) և համապատասխանաբար դրանցով դրսևորվող (արտահայտվող) տերմինների տարբեր տիպերի և կաղապարների մասին է, ապա արդեն մենք գործ ունենք տերմինների վերլուծության բառակազմական մակարդակի հետ[6]։ Իսկ վերջինս պահանջում է կաղապարման եղանակի կիրառում[7]։

Ուրեմն, այս կարգի հետազոտությունների կարևոր խնդիրներից են տերմինարանական առանձին համակարգերի կառուցվածքային ու իմաստային առանձնահատկությունների բացահայտումը, հետևապես և տերմինների տարբեր տիպի կառույցների կազմությանը մասնակցող բառակազմական այնպիսի միջոցների ուսումնասիրությունը, ինչպիսիք են՝ բարդությունը, ածանցումը և կազմության շարահյուսական եղանակը[8]։

---

4 К. А. Левковская, Նշվ. աշխ., էջ 32—33։

5 Н. М. Шанский, Նշվ. աշխ., էջ 65, 73։

6 Տվյալ դեպքում լեզվաբանական տերմինաբանության վերլուծության համար գլխավորապես հիմք ենք ընդունում երկրորդ մոտեցումը։

7 Л. В. Сахарный, О двух уровнях синхронного словообразовательного анализа. «Вопросы методологии и методики лингвистических исследований», Уфа, 1966, էջ 158—159։

8 Տերմինակազմության միջոցներից է նաև հապավումը, որը լեզվարանական տերմինների

Ըստ կառուցվածքի լեզվաբանական տերմիններն էլ հետևյալ ընդհանուր խմբերի են բաժանվում՝ պարզ, ածանցավոր, բարդ, բարդ-ածանցավոր և բաղադրյալ[9]:

Պարզ կամ արմատական տերմինները մյուսներից տարբերվում են այն բանով, որ դրանց կազմությանը լեզվի բառակազմական ոչ մի միջոց էլ չի մասնակցում, ուստի և այն որակում ենք որպես պարզ կառույց։

Ինչպես բազմաթիվ հետազոտությունները, այնպես էլ ներկա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նման կառույց ունեցող տերմինները ամեն մի գիտության (այս դեպքում և հայ լեզվաբանության) տերմինաբանության շատ քիչ տոկոսն են կազմում։ Այս երևույթը պայմանավորված է ներլեզվական և արտալեզվական գործոններով։ Նախ՝ պարզ բառեր այժմ չեն ստեղծվում (իսկ եղածն էլ քիչ է և այդ քչի չնչին մասն է գործածվում որպես տերմին) և երկրորդ՝ այս կաղապարով կառուցված տերմինները գիտական բարդ հասկացություններ (և դրանց իմաստային տարբեր խմբեր) արտահայտելու նույն կարողությունը չունեն, ինչ մյուս տիպի կաղապարներով կառուցված տերմինները։ Սակայն այս կարգի տերմինները գործառական տեսակետից որոշ առավելություն ունեն. նախ՝ կարճ են և դրանով իսկ բավարարում են տերմինի տեսական պահանջմունքներից մեկը։ Բացի այդ, նման կաղապար ունեցող տերմինները գործածվում են մեծ հաճախականությամբ (թեև դրանց ընդհանուր քանակը շատ քիչ է). այնուհետև՝ դրանք տերմինների մի շարք կաղապարների և համապատասխանաբար լեզվաբանական բազմաթիվ հասկացություններ արտահայտող տերմինների կազմության համար հիմք են հանդիսանում՝ տարբեր կարգի կառույցներում մեծ մասամբ հանդես գալով գլխավոր բաղադրիչի դերում։

Տերմինների այս տիպի կաղապարը պայմանականորեն կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ $\boxed{A}$.

Հայ լեզվաբանական դրականության մեջ գործածվող պարզ տերմիններից են՝ արմատ, բայ, բառ, բարբառ, բուն, գիր, դեմք, լեզու, կապ, կերպ, հող, հիմք, հոլով, շեշտ, սեռ, տառ, ոճ, վանկ և այլն։

Տերմինների մյուս տիպի կաղապարների կազմությանը մասնակցում է լեզվի բառակազմական այս կամ այն միջոցը։

Ածանցմամբ կերտվում են տերմինների ընդհանուր կաղապարների հետևյալ տիպերը՝ ածանցավոր, բարդ-ածանցավոր տերմինները (փաստորեն այս կաղապարի կազմությանը միաժամանակ մասնակցում է բառակազմության երկու միջոց), ինչպես նաև բաղադրյալ տերմինների առանձին անդամները։

Խոսելով բառակազմական այս միջոցի մասին, պետք է հաշվի առնել այն հանդամանքը, թե նման եղանակը տերմինակազմության համար առավելությո՞ւն է ներկայացնում, թե՞ ոչ։ Առավելությունը ոչ միայն մեծ քանակությամբ տերմիններ ստեղծելն է, այլ ավելի շուտ այն, որ ածանցմամբ տերմինները համակարգման են ենթարկվում իմաստային և կառուցվածքային առումով։

կազմությանը չի մասնակցում. այն մեծ մասամբ լայն կիրառություն ունի տեխնիկական տերմինաբանության մեջ։

9 Վերջին տեսակը ռուս մասնագիտական դրականության մեջ մեծ մասամբ որակվում է տերմին-բառակապակցություն (термин-словосочетание) անվանմամբ։ Այս ընդհանուր կաղապարի բնորոշման համար որոշ պայմանականությամբ գործածում ենք բաղադրյալ ավանդական տերմինը։

Ածանցման միջոցով կերտվում են տերմինների կազմության հետևյալ տիպերը՝ ա) տերմիններ, որոնց կազմությանը մասնակցում են միայն նախածանցները, բ) տերմիններ, որոնց կազմությանը մասնակցում են միայն վերջածանցները, գ) տերմիններ, որոնց կազմությանը մասնակցում են նախածանցները և վերջածանցները միաժամանակ[10]։

Ածանցավոր տերմինների վերոհիշյալ ընդհանուր կազապարները պայմանականորեն գծագրի վրա կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ Ա) [a]—[A], Բ) [A]—[b], Գ) [a]—[A]—[b], որտեղ a-ն նախածանցն է, b-ն՝ վերջածանցը, իսկ A-ն՝ բառը կամ բառի մի մասը (արմատ, հիմք)։

Այս ընդհանուր կազապարների (Ա, Բ, Գ) քննության ժամանակ, բնականաբար, մեզ պետք է հետաքրքրեն լեզվաբանական տերմինաբանության մեջ հատուկ դեր խաղացած ածանցները (իմաստի մասնագիտացման տեսանկյունից), այլև հիշյալ կազապարներին պատկանող տերմինների որոշակի (մասնավոր) կառույցները։

ա) Նախածանցավոր տերմիններ կամ ածանցավոր տերմինների Ա կազապար. հայ լեզվաբանական տերմինների կազմությանը մասնակցել են անդր-, բաղ-, գեր-, ենթ-, դեր-, մակ-, համ-, հակ-, նախ-, ներ-, շաղ-, շար-, պար-, փոխ- և մի շարք այլ նախածանցներ։ Եվ եթե հաշվի առնենք ածանցավոր տերմինների երրորդ՝ նախածանցավոր-վերջածանցավոր տիպը, ապա վերջինիս կազմությանը մասնակցած նախածանցներից հիմնականում կարելի է առանձնացնել հետևյալները՝ ան-, ապ/ա/-, առ-, արտ-, բակ-, բաց-, հար-, հոմ-, ստոր-, տար-, վեր- և այլն (փաստորեն այս նախածանցները տերմինների կազմության ժամանակ հիմնականում միանում են վերջածանց ունեցող բառերին)[11]։

Պարզ է, որ ներկայումս վերոհիշյալ նախածանցներից ոչ բոլորն են կենսունակության և կանոնավորվածության նույն աստիճանով մասնակցում լեզվաբանական տերմինների կազմությանը (հասկանալի է, որ դրանք, ինչպես և մյուս նախածանցները, ընդհանուր գործածական բառերի կերտման ժամանակ այլ կերպ են դրսևորվում)։

Լեզվաբանական տերմինների այս կազապարի կազմության մեջ ամենից ավելի կանոնավորված կերպով հանդես են գալիս նախ-, ենթ- և մի շարք այլ նախածանցներ[12]։

Նախ+բառ կամ բառի մի մաս մասնավոր կազապարով են կազմված և այժմ էլ կիրառվում են լեզվաբանական հետևյալ տերմինները՝ նախդիր, նախածանց, նախաձև, նախալեզու, նախաբառ, նախաբայ և այլն։

---

10 Բարդ-ածանցավոր տերմինների տիպի մասին կխոսվի առանձին։

11 Տերմինների այս կազապարի և հետևապես դրանց կազմությանը մասնակցող նախածանցների մասին կխոսվի առանձին։

12 Մեր խնդիրը չէ պարզել յուրաքանչյուր նախածանցի ծագման պատմությունը, դրանց համապատասխանությունը հունարենի այս ու այն նախածանցներին կամ նախդիրներին։ Այս հարցերի լուսաբանմանը տարբեր առիթներով անդրադարձել են շատ հայագետներ։ Տե՛ս, օրինակ, վերջերս հրապարակված մի ուշագրավ ուսումնասիրություն՝ Ա. Մուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 134—152։

ենք-ով կազմված տերմիններից ոչ բոլորն են այժմ կիրառվում։ Ներկայումս, բացի հին տերմիններից, կան նաև նորակազմություններ՝ ենքակա, ենքամնա, ենքաբարբառ, ենքաշերտ և այլն։

Ածանցավոր տերմինների Ա կաղապարի կազմությանը ավելի պակաս կանոնավորվածությամբ են մասնակցում մակ- և համ- նախածանցները։ Այդ կարգի տերմիններից են՝ մակբայ, մակդիր, մակաշերտ (ինչպես նաև երբեմնի մականուն բառը), համանուն, համանիշ, համաբարբառ և այլն։

Տերմինների այս կաղապարը կերտող ոչ կենսունակ նախածանցներից են՝ բաղ-, դեր-, հոմ-, ներ-, շաղ-, պար- և այլն։ Դրանցով կազմված տերմիններից են՝ բաղաձայն, դերանուն, դերբայ, հոմանիշ, ներկա, ներածանց, շաղկապ, պարագա և այլն։

բ) Վերջածանցավոր տերմիններ կամ ածանցավոր տերմինների Բ կաղապար. նման կառույց ունեցող տերմինները ածանցավոր կազմությունների մեջ լայն տարածում ունեն։

Վերջածանցների միջոցով բառերի կազմության առավելությունը նախածանցների համեմատությամբ ակնառու կերպով ի հայտ է գալիս գիտական տերմինների կազմության մեջ։ Վերջածանցները, ավելի հստակ, քան նախածանցները, համապատասխան բառը բնորոշում են ինչպես կառուցվածքային, այնպես էլ իմաստային կոնկրետացված հատկանիշներով։

Հետազոտվող բնագավառի տերմինների կազմությանը մասնակցում են -ակ, -ական, -իչ, -յուն, -որդ, -/վ/ած/f/, -ություն, -ում, -ույթ, -ույց և մի շարք այլ վերջածանցներ։

Լեզվաբանական տերմինների դերում, ինչպես հայտնի է, խոսքի մասերից գերազանցապես կիրառվում են գոյականները և ածականները (վերջիններս էլ փոխանվանաբար)։ Հետևաբար, լեզվում գոյություն ունեցող տարբեր խոսքի մասեր կերտող բազմաթիվ վերջածանցներից լեզվաբանական տերմինների կազմության մեջ հիմնականում հանդես են գալիս գոյականակերտ և ածականակերտ վերջածանցները։ Առաջին տեսակի վերջածանցներից են՝ -ած, -ակ, -իչ, -յալ/<եալ/, -յուն, -ություն, -ում, -ույթ, -ույց։ Ածանցների այս խումբը կներառում է վերջածանցավոր տերմինների մի տեսակը (գոյական-տերմիններ)։ Քանի որ լեզվաբանական տերմինների մեծ մասը արտահայտում է վերացական հասկացություններ, ուստի և այդ տիպի տերմինների կազմության համար ամենից ավելի հաճախակի հայոց լեզվում գործածվում է դեռևս հին ժամանակներից եկող -ություն (<ութիւն) վերջածանցը։ Տերմինների կազմության այս մասնավոր կաղապարով (բառ կամ բառի մի մաս+ություն վերջածանց) ընդհանրապես կազմվում է ածանցավոր տերմինների գերակշռող մասը։ Այդ կարգի տերմիններից են՝ գրություն, թեքականություն, կցականություն, հերթագայություն, ձայնեղություն, վերջավորություն, քմայնություն և այլն։

Տերմինների այս տիպի կազմությունը միշտ էլ կենսունակ է եղել հայ լեզվաբանական տերմինաբանության զարգացման բոլոր փուլերում։ Եվ այդ կենսունակությունը առավել ակնհայտ կերպով ի հայտ է գալիս ներկա ժամանակաշրջանում, քանի որ լեզվաբանական նոր տերմինների գերակշռող մասը (իհարկե, ածանցավոր) կազմվում է նման կաղապարով։

Բացի կենսունակությունից տերմինների կազմության այս կաղապարը օժտված է որոշակի կանոնավորվածությամբ (թե՛ իմաստներ արտահայտելու, և թե՛ հաճախակի հանդիպելու տեսակետից)։

Կառուցվածքային նման կաղապարով կազմվում են լեզվաբանության տարբեր բաժինների ու գիտակարգերի անվանումները։ Այսինքն, այս դեպքում կառուցվածքային կաղապարին համապատասխանում է իմաստային մի առանձին կաղապար (բառ կամ բառի մի մաս+ություն → լեզվաբանության բնագավառ)։ Օրինակ՝ լեզվաբանություն, դարձվածաբանություն, իմաստաբանություն, հնչյունաբանություն, ձևաբանություն, ստուգաբանություն, բերականություն և այլն։

Տերմինների կազմության մյուս կենսունակ վերջածանցը (գոյականակերտ) -ում-ն է։ Հայ լեզվաբանական գրականության մեջ հանդիպող այս ածանցով կազմված տերմիններից են՝ գեղչում, լրացում, խոնարհում, հոլովում, հնչույթավորում, մասնիկավորում, ոճավորում, սղում, ստորոգում և այլն։

Եթե վերոհիշյալ վերջածանցները հայոց լեզվի և հայ լեզվաբանական մտքի զարգացման տարբեր փուլերում ունեցել են տերմինակազմական արժեք, ապա գոյականակերտ -ույթ ածանցը հիմնականում այդ հատկանիշից չի ունեցել։ Երկար ժամանակ այս ածանցը բառակազմական արժեք է ունեցել միայն լեզվի ընդհանուր գործածական բառերի շրջանակում (դրանով ժամանակին կազմվել են լեզվաբանական հատուկենտ տերմիններ)։ Ածանցավոր տերմինների կազմության այս մասնավոր կաղապարը (բառ կամ բառի մի մաս+ույթ վերջածանց) սկսում է կենսունակություն ձեռք բերել սովետական շրջանի հայ լեզվաբանության մեջ։ -Ույթ-ով (որն, ի դեպ, միանում է տարբեր խոսքի մասերին կամ բառերին ու բառարմատներին) հիմնականում կազմվում են լեզվի մակարդակների նվազագույն միավորներն արտահայտող տերմիններ, որոնց հիմքում գլխավորապես ընկած են լեզվաբանական նորագույն հասկացություններ։ Այսպես, օրինակ՝ ոտույթ, արժույթ, բառույթ, գրույթ, թեքույթ, իմաստույթ, կցույթ, հերթագայույթ, հնչույթ, ձևույթ (վերջին երկուսը ավելի վաղ կազմություններ են), տիրույթ, տրոհույթ, բերականույթ և այլն[13]։

Այս կաղապարի կենսունակությունը ապացուցվում է այն փաստով, որ օտարլեզվյան բազմաթիվ տերմինների (իհարկե որոշակի կարգի հասկացություններ բնորոշող) թարգմանության դեպքում որպես բառակազմական միջոց կանոնավորապես օգտագործվում է -ույթ վերջածանցը։

Ինչպես -ույթ-ով կազմության կաղապարը, այնպես էլ այլ կարգի լեզվաբանական տերմիններ կերտող բառ կամ բառի մի մաս+ակ վերջածանց կառույցը լայն տարածում է գտել և կենսունակություն է ձեռք բերել ժամանակակից անդրլեզվում (իհարկե, սա նախորդներից ավելի նվազ կենսունակ կաղապար է)։ Այս կաղապարով կառուցված տերմինների հիմքում ընկած է լեզվաբանական որոշակի հասկացությունների դասը։

-Ակ-ն էլ տարբեր խոսքի մասերին միանալով (ինչպես նաև բայահիմք, բայարմատ), կազմում է վերջածանցավոր տերմինների ընդհանուր կաղապարներից մեկը՝ գոյական-տերմիններ (ի դեպ, այս վերջածանցը որոշ մասնակցություն ունի ածական-տերմինների կազմության ժամանակ)։ Այս կարգի տերմիններից են՝ ամանակ, հնչակ, տարբերակ, փոփոխակ, ձևակ և այլն։

---

13 Այստեղ չեն բերվում -ույթ-ով կերտված այն տերմինները, որոնց կազմությանը մասնակցում են տարբեր նախածանցներ։

Գոյականակերտ մյուս ածանցներով (-իչ, -յալ, -ույց, -որդ, -իկ, -լուն, -ած) կազմված լեզվաբանական տերմինների կաղապարները ավելի նվազ կենսունակ են, քան նախորդները։ Այդ վերջածանցներով կերտված տերմիններից են՝ հատկացուցիչ, որոշիչ, հատկացյալ, որոշյալ, ստորոգյալ, հանգույց, ձևորդ, ձայնորդ, լծորդ, մասնիկ, հնչյուն, դարձված։

Վերջածանցավոր տերմինների մյուս տեսակը կազմվում է ածականակերտ ածանցներով։ Այս կաղապարը պայմանականորեն կարելի է կոչել «ածական-տերմիններ»։ Եթե նախորդ կաղապարներով կազմված տերմինները (գոյական-տերմիններ) անկախ են գործածվում, ապա սրանք նախ և առաջ բաղադրյալ տերմինների մի անդամն են կազմում (այսպես՝ ուղղական, սահմանական և այլ «ածական-տերմինները» փաստորեն կիրառվում են առանց երկրորդ անդամների՝ հոլով, եղանակ)։ Առանձին գործածվելու դեպքում վերոհիշյալ կաղապարով կազմված տերմինները, փաստորեն, փոխանվանաբար են հանդես գալիս (այսպես՝ եթե գոյական, ածական, թվական և նման կարգի տերմինները դիտում ենք որպես կապակցության բաղադրիչներ, ապա դրանք ածականներ են, իսկ առանձին միավոր դիտվելու դեպքում գոյականի արժեք են ձեռք բերում)։

Ածականական կազմությունների մեջ ամենից ավելի կենսունակ և կանոնավորապես հանդիպողը -ական վերջածանցով տերմիններն են։ Հիշյալ ածանցով տարբեր խոսքի մասերից և բայարմատներից կազմվում են ածականներ, որոնք արտահայտում են մի շարք իմաստներ՝ հարաբերություն, պատկանելություն, հատկանշային վերաբերություն և այլն. ածական, գոյական, ըղձական, թվական, հայցական, պայմանական, սահմանական, տրական, ցոյական, ուղղական և այլն[14]։

Վերջածանցավոր տերմինների ամենից անկենսունակ կաղապարը «մակբայ-տերմիններն» են (բառ կամ բառի մի մաս+/ա/բար վերջածանց)։ Այդ տերմիններից այժմ գործածվում են միայն երկուսը՝ աշխարհ-/ա/բար, գր-/ա/-բար, որոնք վաղ կազմություններ են և ներկայումս կորցրել են մակբայական արժեքը։

գ) Նախածանցավոր-վերջածանցավոր տերմիններ կամ ածանցավոր տերմինների Գ կաղապար. այս կաղապարը ավելի կենսունակ և տարածված է, քան սոսկ նախածանցավոր տերմիններինը։ Սրանց կազմությանը դարձյալ կենսունակորեն և կանոնավորված կերպով մասնակցում են -ություն, -ում, -ույթ գոյականակերտ ածանցները (եթե խոսքը ածանցների հիշյալ հատկանիշների մասին է)։ Տվյալ դեպքում էլ նկատվում է վերջածանցների կիրառության կարգավորվածություն, որն, ինչպես հայտնի է, բավարարում է տերմինաբանության տեսական պահանջմունքները (տերմինաբանության համակարգայնության պահպանումը իմաստա-կառուցվածքային առումով)։

Հիշյալ կառույցն ունեցող տերմինների կազմությանը ավելի շատ տարբեր նախածանցներ են մասնակցում, քան վերջածանցներ, բայց ինչպես միշտ, այս դեպքում էլ վերջիններս ավելի կենսունակ և տարածված են։ Ան-, ապ-, համ- նախածանցներով կերտվում են բազմաթիվ լեզվաբանական տերմիններ։

---

14 «Ածական-տերմինների» մյուս մասնավոր կաղապարների քննությանը չենք անդրադառնում, քանի որ դրանք մեծ մասամբ հանդես են գալիս ոչ թե առանձին, այլ բաղադրյալ տերմինների մյուս անդամների հետ միասին։

Ան- ժխտական նախածանցը հիմնականում միանում է -ություն վերջածանց ունեցող բառերին։ Այս մասնավոր կաղապարը պայմանականորեն կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ ան- նախածանց+բառ կամ բառի մի մաս+-ություն վերջածանց, կամ էլ՝ ան-+-ություն վերջածանցավոր բառ։

Պարզ է, որ այս կարգի տերմիններն էլ արտահայտում են լեզվաբանական վերացական հասկացություններ։ Այսպես օրինակ՝ ան-կանոն-ություն, ան-ուղղ-ություն, ան-մասնիկավոր-ություն, ան-շաղկապ-ություն, ան-համաձայնու-թյուն, ան-հոգնական-ություն և այլն[15]։

Լեզվաբանական աշխատությունների հիման վրա կատարած ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տերմինների կազմության այս կաղապարը նոր է սկսում կենսունակություն և կանոնավորվածություն ձեռք բերել։

Ապ/ա/- նախածանցը մեծ մասամբ միանում է -ում վերջածանցավոր բառերին։ Այսպես օրինակ՝ ապ/ա/-իմաստավոր-ում, ապ/ա/-մասնիկավոր-ում, ապ/ա/-ձայնեղաց-ում, ապ/ա/-ոնգայնաց-ում, ապ/ա/-հնչույթավոր-ում, ապ/ա/ -սուլականաց-ում և այլն։

Հաս/ա/- նախածանցով կազմված տերմինների համար բնորոշն այն է, որ այդ կաղապարը դարձյալ ձևավորվում է -ություն վերջածանցով։ Հայ լեզվաբանական գրականության մեջ տարածված այդ կարգի տերմիններից կարելի է հիշատակել մի քանիսը՝ համ/ա/-դարձ-ություն, համ/ա/-ձայն-ություն, համ/ա/-ժամանակ-ություն, համ/ա/-բան-ություն և այլն։

Վերջին ժամանակներս ածանցավոր տերմինների Դ կաղապարի կազմության մեջ կենսունակություն են ձեռք բերել գեր-, ենթ-, մակ- նախամասնիկները, որոնք գլխավորապես միանում են -ույթ վերջածանցավոր բառերին (տերմիններին)։ Այս մասնավոր կաղապարով (գեր, ենթ, մակ/ա/+ բառ կամ բառի մի մաս+ույթ) է կազմված կառուցվածքային լեզվաբանության տերմինների մի առանձին խումբը՝ գեր-հնչ-ույթ, գեր-ձև-ույթ, գեր-շարահուս-ույթ, ենթ/ա/-հնչ-ույթ, ենթ/ա/-գր-ույթ, ենթ/ա/-ձև-ույթ, մակ/ա/-հնչ-ույթ, մակ/ա/-ձև-ույթ և այլն։

Տերմինների բառակազմական հիշյալ կաղապարը կերտող մյուս նախածանցներից են՝ արտ-, ստոր-, փոխ- և մի շարք ուրիշներ։ Դրանցից յուրաքանչյուրով կազմված տերմինների կաղապարները կերտվում են տարբեր վերջածանցներով։ Այսպես՝ արտ/ա/-սան-ություն, արտ/ա/-սան/վ/-ածք, արտ/ա/-բեր-ում, ստոր-ոգ-ում, ստոր-ոգել-ություն, փոխ-անուն-ություն, փոխ-առություն, փոխ-արկ-ում, փոխ-արկ-ույթ և այլն[16]։

---

15 Կաղապարներն ավելի հստակ ներկայացնելու համար տվյալ դեպքում առանձնացնում ենք միայն նախածանցները և վերջածանցները և ոչ թե տերմինի բոլոր տարրերը։ Այսպես, տերմինները (ինչպես նաև ընդհանուր գործածական բառերը) կարելի է բաժանել հետևյալ մասերի՝ ան-մասն-իկ-ավոր-ություն, ան-շաղ-կապ-ություն և այլն։

16 Ածանցավոր տերմինների Դ կաղապարի կազմությանը մասնակցող մյուս նախածանցներով (առ-, բակ-, բաղ-, բաց-, նախ-, ներ-, շար-, տար-, վեր-) կառուցված տերմինները, ի տարբերություն լեզվի ընդհանուր գործածական բառերի, շատ քիչ են և, ինչպես ցույց տվեց նախածանցավոր տերմինների քննությունը, դրանց մի մասը անկենսունակ է։ Թվարկված նախածանցներով և մի շարք տարբեր վերջածանցներով կազմված տերմիններից են՝ առդրություն, բակառություն, բացահայտիչ, բաղարկություն, նախադասություն, ներմարմնավորում, շարահյուսություն, տարնմանություն, վերհնչույթավորում և այլն։

Տերմինակազմության մյուս միջոցը բառաբարդումն է։ Վերջինս գիտական տերմինների կերտման ժամանակ հայերենի նման լեզվում ածանցման համեմատությամբ իր բոլոր հնարավորությունները չի դրսևորում[17]։

Բառաբարդմամբ կերտվում են բարդ և բարդ-ածանցավոր տերմինները (իհարկե, վերջինիս կազմությանը մասնակցում է նաև ածանցումը)։ Բարդ տերմինների կառույցը մի շարք առավելություններ ունի։ Նախ՝ դրանով արտահայտվում են բարդ հասկացություններ։ Երկրորդ՝ դրանք նպաստում են տերմինաբանության մեջ բազմիմաստության վերացմանը, որն, ի դեպ, բարդ բառերի բնորոշ առանձնահատկությունն է[18]։ Այս կազապարը կենսունակ է և ունի կառուցվածքային կայուն համակարգ, քանի որ դրա նմուշով ստեղծվում են բազմաթիվ նոր բարդ տերմիններ։

Բարդ տերմիններին պատկանող մասնավոր կազապարները կարելի է վեր հանել հենց այդ ընդհանուր կազապարը (սա իրենից ներկայացնում է համադրական տիպի կազապար) տարբեր մոտեցումներով քննելուց հետո։

Նախ քննենք բարդ տերմինների բնույթը ըստ բաղադրիչների քանակի միացության (այս հանգամանքը հաշվի է առնվում, քանի որ տերմինների մեջ բաղադրիչների քանակը որոշակի դեր է խաղում)։ Հայերենի համար լեզվաբանական բարդ տերմինների բնորոշ կազապարը երկանդամ կառույցներն են։

Ըստ բաղադրիչների միացման միջոցի բարդ տերմինների մեջ առանձնանում են երկու տիպի կառույցներ՝ հոդակապավոր և անհոդակապ։ Այս կազապարները պայմանականորեն կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ |A|c|B| և |A|B|, որտեղ A-ն և B-ն առանձին բառեր են (բաղադրիչները), իսկ c-ն՝ հոդակապը։ Վերլուծությունը ցույց տվեց, որ հայերենում այս կառույցի բնորոշ տիպը հոդակապավոր տերմիններն են։ Վերջիններս բարդ տերմինների ընդհանուր թվի 88%-ն են կազմում, իսկ մնացած 12%-ը անհոդակապ բաղադրություններն են։ Այս երկու մասնավոր կազապարներով կառուցված տերմիններից են՝ բարբառ-ա-խումբ, հնչյուն-ա-շարք, հոդ-ա-կապ, ձայն-ա-կապ, մասնիկ-ա-խումբ, վանկ-ա-բուն, վերջ-ա-կետ, բայ-անուն, բառ-իմաստ, կերպ-ածանց, ձայն-դարձ, սոսկ-ածանց և այլն։

Նայած այն հանգամանքին, թե բարդ տերմինի բաղադրիչները որոշակի ինչ խոսքի մասերի են պատկանում, ըստ այդմ էլ առանձնանում են ձևաբանական հետևյալ տիպի կազապարները՝ գոյական+գոյական (Գ+Գ), ածական+գոյական (Ա+Գ), թվական+գոյական (Թ+Գ), դերանուն+գոյական (Դր+Գ)։ Պարզ է, որ բարդ տերմինների կազմության այս մասնավոր կազապարները կենսունակության նույն աստիճանը չունեն և նույն կանոնավորվածությամբ հանդես չեն գալիս։ Տերմինների այս կարգի կառույցների մեջ ամենից ավելի կենսունակը և տարածվածը Գ+Գ կազապարն է։ Այս մասնավոր կազապարով կազմված են բարդ տերմինների գերակշռող մասը՝ բառ-ա-պաշար, բառ-ա-մասնիկ, բառ-ա-հոդված, բառ-ա-ցանկ, բայ-ա-հիմք, լեզվ-ա-նյուղ, լեզվ-ա-ընտանիք և այլն։

Բարդ տերմինների ձևաբանական մյուս տարածված կազապարը Ա+Գ կառուցն է։ Թեև այս տիպի կազապարով կառուցված տերմինները շատ քիչ են

---

17 Այսպես, տերմինակազմությանը չեն կարող մասնակցել կրկնավոր, հարադիր և կցական բարդությունները։

18 Տե՛ս К. А. Левковская, Именное словообразование в современной немецкой общественно-политической терминологии, М., 1960, էջ 35։

նախորդի համեմատությամբ, բայց, այնուամենայնիվ, խոսքի մասերից երկրորդը ածականն է, որ գործուն կերպով մասնակցում է լեզվաբանական տերմինների կազմությանը։ Նման կաղապարով են կերտված գաղտն-ա-վանկ, մանր-ա-կաղապար, մեծ-ա-կաղապար, մեծ-ա-տառ, սոսկ-ածանց, ծածկ-ա-լեզու և մի շարք այլ տերմիններ։

Մյուս մասնավոր կաղապարներով բարդ տերմինների կազմությունը այնքան էլ բնորոշ չէ և քիչ է հանդիպում լեզվաբանության տերմինաբանական համակարգում։ Այսպես, Թ+Գ կառույցն ունեցող տերմիններից կարելի է հիշատակել հետևյալները՝ բազմ-ա-բարբառ, երկ-բարբառ, եռ-ա-բարբառ, քառ-ա-բարբառ և մի քանի այլ բարդություններ։ Առավել քիչ տարածված են Դր+Ֆ կաղապարով կազմված տերմինները. օրինակ՝ նույն-անուն, նույն-ա-նիշ և այլն։

Մնացած խոսքի մասերի կամ բայահիմքերի և գոյականի միացությունից կազմված տերմինները հատուկենտ են և լրիվ անկենսունակ։

Բարդ տերմինների մյուս տեսակի կաղապարները կարելի է վերհանել դարձյալ անմիջական բաղադրիչների վերլուծության եղանակով։ Հաշվի առնելով այս կառույցի բաղադրիչների բնույթը՝ ըստ տերմինների և ոչ տերմինների պատկանելության, պարզվում է, որ այս դեպքում ի հայտ են գալիս չորս կարգի կաղապարներ։ Բոլոր հնարավոր կաղապարներով էլ լեզվաբանական տերմիններ կերտվում են։

Բարդ տերմինների մեջ ամենից ավելի բնորոշը և տարածվածը $S+\bar{S}$ կաղապարն է[19]։ Դրանով են կերտված բառ-ա-պատկեր, բառ-ա-պաշար, լեզվ-ա-նյուղ, հնչյուն-ա-պատկեր, տառ-ա-նիշ, տառ-ա-ձև և շատ ուրիշ տերմիններ։

Մյուս երկու կաղապարները՝ $\bar{S}+S$ և $\bar{S}+\bar{S}$ համարյա կենսունակության և կանոնավորվածության նույն աստիճանն ունեն։ Առաջին կառույցով կերտված տերմիններից են՝ բոլոր-ա-գիր, գլխ-ա-բառ, գաղտն-ա-վանկ, մեծ-ա-տառ, սոսկ-ածանց և այլն։ Երկրորդ կառույցն ունեն՝ առաջ-ա-դիր, զուգ-ա-ձև, հիմն-ա-ձև, ձայն-ա-նիշ և մի շարք այլ տերմիններ։

Բարդ տերմինների այն կաղապարը, որի երկու բաղադրիչներն էլ լեզվաբանական տերմիններ են ($S+S$), մյուսների նման կանոնավորված կերպով հանդես չի գալիս։ Այսպես օրինակ՝ բառ-ա-շեշտ, բայ-անուն, բառ-ա-հիմք, վանկ-ա-գիր և այլն։

Վերոթվարկյալ օրինակները ցույց են տալիս, որ բարդ տերմինի բաղադրիչները առանձին վերցրած կարող են բազմիմաստ լինել (մանավանդ, երբ բաղադրիչի դերում հանդես է գալիս լեզվի ընդհանուր գործածական բառ), բայց բարդ տերմինը ամբողջությամբ մենիմաստության հատկանիշ է ձեռք բերում[20]։

Լեզվաբանական տերմինների մյուս ընդհանուր կաղապարի՝ բարդ-ածանցավոր տիպի ($\boxed{A}+\boxed{B}-\boxed{C}$) կազմությունը, փաստորեն, մասնակ

---

19 S-տերմին, $\bar{S}$-ոչ տերմին։ Ոչ տերմին արտահայտության տակ նկատի են առնվում թե՛ լեզվի ընդհանուր գործածական բառերը, և թե՛ լեզվաբանության մեջ գործածվող ուրիշ գիտությունների այն տերմինները, որոնք դեռևս չեն արմատացել լեզվաբանական տերմինաբանության մեջ։

20 К. Л. Левковская, Նշվ. աշխ., էջ 45։

ցում են բառակազմության երկու միջոցները միաժամանակ (բարդություն և ածանցում)։

Քանի որ ածանցման ու բարդության և հետևապես դրանցով կազմված տերմինների տարբեր կաղապարների մասին մանրամասն խոսվել է, ուստի տվյալ դեպքում բավարարվենք միայն այս կարգի կառույցն ունեցող մի շարք **տերմինների թվարկմամբ՝** բառ-ա-կազմ-ություն, կիս-ա-շփ-ական. հնչյուն-ա-փոխ-ություն. ձև-ա-հնչ-ույթ, վանկ-ա-գր-ություն, տառ-ա-դարձ-ություն **և այլն։**

Տերմինաբանական համակարգերի ամենից ավելի բնորոշ տիպը բաղադրյալ տերմիններն են։ Ինչպես ցույց են տալիս լեզվաբանների մեծ մասի հետազոտության արդյունքները, գիտության մի որևէ բնագավառի ամբողջ տերմինների մոտավորապես 70%-ը արտահայտվում է նման կաղապարով։ Փաստորեն, ժամանակակից տերմինաբանական համակարգերի բնորոշ գիծը վերլուծականության ձգտումն է (այսինքն բաղադրյալ անվանումների կառուցումը)։

Տերմինաբանական համակարգերում նման տիպի տերմինների տարածված լինելը օրինաչափ և բնական է։ Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով։ Նախ՝ տերմինների մեջ այս կառույցները առանձնանում են իրենց բացառիկ համակարգայնությամբ։ Երկրորդ՝ այդ ուղիով նշանակալից կերպով ընդլայնվում է արդեն իսկ հայտնի նյութի հիման վրա նոր տերմինների կազմության հնարավորությունը[21]։

Հայերենի լեզվաբանական տերմինների ուսումնասիրությունը նույնպես ցույց տվեց, որ տերմինների գերակշռող մասը այս կառույցով է կերտվում (տերմինների ընդհանուր թվի 70%-ից ավելին)։

Ըստ բաղադրիչների քանակի տերմինների այս տիպի մեջ առանձնանում են երկանդամ, եռանդամ և բազմանդամ կառույցներ[22]։

Հայերենի լեզվաբանական տերմինների համար բնորոշը երկանդամ տերմինների կաղապարն է ($\boxed{A}-\boxed{B}$), որն ամենակենսունակն է և դրանով կազմված տերմինները ամենից ավելի մեծ թիվ են կազմում (բաղադրյալ տերմինների ընդհանուր թվի 81%-ից ավելին, իսկ տերմինների ընդհանուր թվի 58%-ը)։ Մասնագետները գտնում են, որ տերմինաբանության մեջ համակարգայնացնող հատկանիշով ամենից ավելի օժտված են բաղադրյալ տերմինների երկանդամ կառույցները։ Սրանք ճշգրիտ կերպով ցույց են տալիս հասկացությունների համակարգում տվյալ հասկացության տեղը[23]։

Երկանդամ բաղադրյալ տերմինների ձևաբանական կաղապարներից ամենից ավելի կենսունակը և կանոնավորապես հանդիպողը Ա+Գ կառույցն է (նման կազմությունները երկանդամ բաղադրյալ տերմինների ընդհանուր թվի 80%-ից ավելին են)։ Ձևաբանական այս կաղապարի կենսունակության և տարածվածության բարձր աստիճանը պայմանավորված է ոչ միայն ներլեզվական, այլ թերևս ավելի շատ արտալեզվական գործոններով՝ լեզվաբանության մեջ եղած տերմինացվող հասկացությունների բնույթով։

---

21 Г. О. Винокур, նշվ. աշխ., էջ 45։

22 Բաղադրյալ տերմինների մեջ իբրև բաղադրիչ հանդես եկող բարդ բառերը (տերմինները) դիտում ենք որպես միաբառ կազմություն։

23 Նման առավելությամբ օժտված են նաև երկանդամ բարդ տերմինները։

Ա+Գ կաղապարով կազմված տերմիններից են՝ անվանական բառակապակցություն, բաց վանկ, երկար երկբարբառ, իսկական կապ, խառը հոլովում, կայուն շեշտ, ներքին բեռում, փակ վանկ, օժանդակ բայ և այլն։

Երկանդամ բաղադրյալ տերմինների ձևաբանական մյուս կաղապարը՝ Գ+Գ, ավելի պակաս կենսունակ է, քան նախորդը։ Այս կառույցն ընդգրկող տերմինները կազմում են երկանդամ բաղադրյալ տերմինների ընդհանուր թվի մոտավորապես 13%-ը։ Այդ կարգի տերմիններից են՝ անջատման նշան, բառի նշանակություն, ենթակայի լրացում, խոնարհման հարացույց, հնչյունի երկարություն, նախադասության անդամ և այլն։

Բացի սրանցից, երկանդամ բաղադրյալ տերմինների մեջ առանձնանում են ձևաբանական մի քանի այլ կաղապարներ՝ Դր+Գ (եղանակավորող բառեր, զեղչված նախադասություն, նախահավելված ձայնավոր, չհոլովվող բառեր, քարացած հոլովաձևեր և այլն), Թ+Գ (առաջին, երկրորդ ապառնի, երկակի թիվ, զրո վերջավորություն, կրկնակի հոլովում և այլն)։ Վերջին երկու կաղապարներով կառուցված տերմինները երկանդամ կառույցների ընդհանուր թվի հաշիվ 7% են կազմում (փաստորեն, սրանք անկենսունակ և անկանոն կերպով դրսևորվող կառույցներ են)։

Երկանդամ բաղադրյալ տերմինների մյուս կարգի կաղապարներից (բաղադրիչների բնույթը ըստ տերմինների և ոչ տերմինների պատկանելության) ամենից ավելի կենսունակը և կանոնավորապես դրսևորվողը $\bar{S}+S$ կառույցն է։ Վերջինս երկանդամ բաղադրյալ կառույցների ընդհանուր թվի 49% է կազմում։ Նման կաղապարով կերտված տերմիններից են՝ անկանոն հոլովում, բաց վանկ, դարտուղի խոնարհում, ժխտական նախածանց, լիակատար առնմանում, խառը հոլովում, հիմնական ձևույթ, ձևի պարագա, պարզ ստորոգյալ և այլն։

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երկանդամ տերմինների մեջ, բնականաբար, այս մասնավոր կաղապարը պետք է տարածված լիներ։ Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ընդհանուր առմամբ լեզվաբանական տերմինի դերում պետք է հանդես գա երկրորդ անդամը, քանի որ առաջինը լրացնողն է և նպատակահարմար է, որ արտահայտվի լեզվի ընդհանուր գործածական բառով։

Երկանդամ բաղադրյալ տերմինների կանոնավորապես դրսևորվող մյուս կաղապարը արտահայտվում է $\bar{S}+\bar{S}$ կառույցով։ Նման կաղապարն ունեցող տերմինները երկանդամ կառույցների ընդհանուր թվի 22,5% են կազմում։ Այդ կարգի տերմիններից են՝ բառիմաստի ընդլայնում, ենթակայի խումբ, լեզվի կառուցվածք, խոսքի մասեր, նախադասության անդամ, շարահյուսական միավոր, վանկի կենտրոն, բերականական կարգ և այլն։

Երկանդամ բաղադրյալ տերմինների մյուս մասնավոր կաղապարի մեջ հանդես եկող երկու անդամներն էլ լեզվաբանական տերմիններ են (S+S)։ Այս կաղապարով կերտված տերմինները երկանդամ կառույցների ընդհանուր թվի 20,5% են կազմում։ Նման կարգի տերմիններից են՝ ածանցավոր բառ, բայական ստորոգյալ, դարձվածաբանական հոմանիշ, շեշտակիր վանկ, վանկային գիր, բերականական համանունություն և այլն։

Եվ վերջապես, երկանդամ բաղադրյալ տերմինների մյուս մասնավոր կաղապարն այն է, որի երկու բաղադրիչներն առանձին վերցրած լեզվաբանական տերմիններ չեն (այսինքն, մեծ մասամբ լեզվի ընդհանուր գործածական բա-

ոեր են)։ Երկու անդամների միացությունն է, որ տվյալ կառույցին տալիս է տերմինային արժեք։ Սակայն այս կաղապարը (Տ+Տ երկանդամ բաղադրյալ տերմինների մեջ ամենաանկենսունակն է և, բնականաբար, դրանով կերտված տերմինները շատ քիչ են հանդիպում (սրանք երկանդամ բաղադրյալ տերմինների ընդհանուր թվի 8%-ն են կազմում)։ Այս կարգի տերմիններից են՝ ռանձնահատուկ արտահայտություն, գաղափարական վերլուծություն, «խաչավորման տեսություն», վինակի կարգ, փոխազդեցական տարբերակներ և այլն։

Ինչպես ասվեց, բաղադրյալ տերմինների մյուս ընդհանուր կաղապարը եռանդամ կառույցներն են։ Պարզ է, որ այս տերմինակառույցի երկու կարգի հնարավոր կաղապարների քանակը պետք է ավելի շատ լինի, քան նախորդներինը՝ ի հակառակ դրանցով կազմված տերմինների ընդհանուր թվի և կենսունակության աստիճանի։ Եռանդամ կառույց ունեցողները բաղադրյալ տերմինների ընդհանուր թվի 15% են կազմում։

Եռանդամ բաղադրյալ տերմինների մեջ ձևաբանական բնորոշ և կենսունակ կաղապարը Ա+Ա+Ռ կառույցն է, որի միջոցով կազմվում է եռանդամ բաղադրյալ տերմինների մեծ մասը։ Այսպես՝ անիսկական բարդ բառ, առաջնալեզվային պայթական բաղաձայն, բարդ ստորադասական նախադասություն, ընդհանուր պատմական հնչյունափոխություն, ժամանակակից հայոց լեզու և այլն։

Ձևաբանական մյուս երեք կաղապարները ըստ նվազող կենսունակության հետևյալներն են՝ Գ+Ա+Գ (բարբառների հնչյունական դասակարգում, բայի ժխտական ձև, լեզուների համեմատական քերականություն և այլն), Ա+Գ+Գ (առաջնային շարքի ձայնավոր, բաց վանկի օրենք, կցական տիպի լեզու և այլն), Գ+Գ+Գ (լեզվի զարգացման փուլ, խոսքի մասերի փոխանցում, ձայնավորների ներդաշնակության օրենք և այլն)։

Ձևաբանական մնացած կաղապարների քանակը թեև շատ է, բայց դրանցով կազմված տերմիններ շատ քիչ են հանդիպում։

Եռանդամ տերմինների մյուս կարգի կաղապարներից ամենից կենսունակը և կանոնավորապես դրսևորվողը Տ+$\overline{Տ}$+$\overline{Տ}$ կառույցն է։ Ի տարբերություն երկանդամների, որոնցում իբրև տերմին գլխավորապես հանդես է գալիս վերջին բաղադրիչը, այստեղ վերջին երկու բաղադրիչները մեծ մասամբ ընդհանուր գործածական բառեր են։ Նման կարգի տերմիններից են՝ ածականների համեմատության աստիճաններ, բառի ներքին ձև, լեզվական արտահայտության միջոցներ, հնչյունի երկարության նշան և այլն։

Մյուս կաղապարները (ըստ նվազող կենսունակության) կազմված են հետևյալ զուգորդություններով՝ $\overline{Տ}$+$\overline{Տ}$+Տ (արդի գրական հայերեն, բարձր աստիճանի ձայնդարձ և այլն), $\overline{Տ}$+Տ+Տ (բարդ ածանցավոր բառ, երկրորդական պարագայական նախադասություն և այլն), $\overline{Տ}$+Տ+$\overline{Տ}$ (երկրորդական խոսքի մասեր, եռաստիճան բաղաձայնական համակարգ և այլն), Տ+$\overline{Տ}$+Տ (անշաղկապ բարդ նախադասություն, բայական բաղադրյալ ստորոգյալ և այլն), Տ+Տ+$\overline{Տ}$ (բայի եղանակային ձևեր, բառերի շարահյուսական կապ), $\overline{Տ}$+

+Ֆ+Ֆ (աշխատանքային ճիշերի տեսություն, անմիջական բաղադրիչների վերլուծություն) և Ֆ+Ֆ+Ֆ (անցյալ կատարյալի հիմք):

Բաղադրյալ տերմինների մյուս ընդհանուր կաղապարը արտահայտվում է բազմանդամ *(քառանդամ և ավելի) կառույցներով։ Այստեղ հնարավոր կաղապարների թիվը բոլորից էլ շատ է (պարզ է, որ դրսևորվածների գերակշռող մասը անկենսունակ է), բայց այս կարգի կազմությունները բաղադրյալ տերմինների աննշան տոկոսն են կազմում։*

Այս կառույցների անկենսունակությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով։ Նախ որ գործառական տեսակետից գիտական տերմինաբանության համար բոլորովին էլ նպատակահարմար չէ այդքան երկար կազմությունների կիրառությունը։ Նման կարգի տերմինները առաջացնում են տնտեսման սկզբունքի խախտում, որևէ անգամի բաց թողման հնարավորություն է ի հայտ գալիս։ Երկրորդ, որն ամենակարևորն է, այս կառույցները մեծ մասամբ ընդունակ չեն գիտական հասկացությունները դիպուկ և ըստ հնարավորին ճշգրիտ բնորոշելու։ Եվ որքան տերմինի բաղադրիչների քանակը ավելանում է, այնքան էլ այդ կարգի կազմությունները դառնում են նկարագրական բնույթի։ Բազմանդամ կառույց ունեցող տերմիններից են՝ բառապաշարի հարստացման ներքին միջոց, երկրորդական կարգի երկրորդական նախադասություն, շեշտի հետ կապված հնչյունափոխություն *և այլն։*

Այստեղ, ինչպես և նախորդ կառույցների տարբեր կաղապարների դեպքում, խոսքի մասերի կիրառության նույն պատկերն է առկա (այսինքն՝ տերմինների բաղադրիչների դերում գերազանցապես հանդես են գալիս գոյականները և ածականները)։ Իսկ մյուս կարգի կաղապարների մասին կարելի է ասել, որ բաղադրիչների դերում ավելի շատ հանդես են գալիս լեզվի ընդհանուր գործածական բառերը, քան թե լեզվաբանական տերմիններ։

Լեզվաբանական տերմինաբանության համակարգում (ինչպես նաև այլ գիտությունների բնագավառներում) եղած գծիկավոր գրությամբ տերմինները նպատակահարմար ենք գտնում առանձնացնել մյուսներից և դիտել որպես առանձին մասնավոր կաղապար ներկայացնող տերմինակառույց[24]*։ Ի դեպ, այս կարգի տերմինների ընդհանուր քանակը լեզվաբանական տերմինաբանության մեջ չնչին տոկոս է կազմում։*

Այս կարգի կառույցներում առանձնանում են հետևյալ տիպերը՝ միանդամ տերմիններ *(թեև իրականում անդամների քանակը երկուսն է, բայց այն դիտվում է որպես մեկ բարդ հասկացություն արտահայտող կաղապար),* երկանդամ *և* եռանդամ *տերմիններ։ Նման կառույցները կարծես մոտենում են բարդ և բաղադրյալ տերմինների տիպին։*

Միանդամ տերմիններ՝ բառ–հասկացություն, բառ–նախադասություն, բայ–ստորոգյալ, հիմք–լեզու *և այլն։*

Երկանդամ տերմիններ՝ հարցա–հարաբերական դերանուններ, վանկաբառային հապավում, իջնող–բարձրացող շեշտ *և այլն։*

Եռանդամ տերմիններ՝ բերականական–մեկնաբանական աշխատությունների ենթաշրջան, իմաստա–կառուցվածքային մեկնաբանության ենթաշրջան, կառուցվածքա–հարաբերակցային մեկնաբանությունների ենթաշրջան *և այլն։*

---

24 *Տերմինների այս տիպի քննության մասին տե՛ս* Д. С. Лотте, Образование и правописание трехэлементных научно-технических терминов, М., 1969.

Ամփոփում՝ հայ լեզվաբանական տերմինաբանության ուսումնասիրությունը (բառակազմական վերլուծության ընդհանուր սկզբունքներից) պարզում է գիտության այս բնագավառի տերմինների կառուցվածքա-իմաստային մի շարք օրինաչափություններն ու առանձնահատկությունները։ Լեզվաբանական տերմինների կազմությանը կենսականորեն և կանոնավորված կերպով մասնակցում են բառակազմության ձևաբանական և շարահյուսական եղանակները, որոնց էլ ընդհանրապես պատկանում է ժամանակակից տերմինաբանական համակարգերի զարգացման առաջատար դերը։ Տերմինների բոլոր տիպի կառույցներն էլ գլխավորապես կերտված են հայոց լեզվի ներքին միջոցներով։ Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ օտարլեզվյան փոխառյալ տերմինների քանակը այս բնագավառում չնչին տոկոս է կազմում։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СТРУКТУРНО-СЕМАНТИЧЕСКОГО АНАЛИЗА ЛИНГВИСТИЧЕСКИХ ТЕРМИНОВ

Л. О. КАЗАНЧЯН

(Резюме)

Исследование армянской лингвистической терминологии на основе общих принципов словообразовательного анализа выявляет некоторые структурно-семантические закономерности и особенности терминов.

Общие словообразовательные модели этих терминов следующие: простые, производные, сложные, сложнопроизводные и составные (термины-словосочетания), которые в свою очередь представлены рядом частных моделей морфологического и семантического характера.

Простые термины в системе лингвистической терминологии составляют незначительную часть, производные же — довольно многочисленны. По убавляющейся продуктивности и регулярности среди моделей производных терминов выделяются следующие: суффиксальные (в образовании этих терминов активно участвуют -ություն, -ում, ությ и некоторые другие суффиксы), префиксально-суффиксальные и префиксальные. Самыми типичными из моделей сложных терминов являются двучленные, в которых различаются два типа. Анализ сложнопроизводных терминов показывает, что в их образовании активно участвуют те же суффиксы, что и в производных.

Подавляющее большинство (более 70 процентов) терминов составляют термины-словосочетания (двучленные, трехчленные и многочленные). Выделенные два типа моделей составляют комбинации, которые по убавляющейся продуктивности и регулярности образуют следующую картину: $A + S$, $S_{gen} + S$, $N_{um} + S$, $Part + S$ и $\bar{T} + T$, $T + \bar{T}$, $T + T$, $\bar{T} + \bar{T}$.

Выясняется, что подавляющее большинство лингвистических терминов образовано внутренними средствами армянского языка.